ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ՎՇՏԻ ԽՈՍՔ

Այսօր, տխո՜ւր, խոնարհվել են դրոշները սովետական,
Այսօր, տխո՜ւր, լաց է լինում սիրտն աշխարհի ողջ մարդկության,
Այսօր բոլոր հայացքները սուգով հառել են Կրեմլին,
Քո վշտալի մահվան առթիվ, մեր անմոռաց հա՛յր ՍՏԱԼԻՆ:

Քո նայվածքը աստղերից էլ պայծառաշող լույս էր անմար,
Քո մեկ բառը հույս էր հաստատ ուղեկորույս մարդկանց համար,
Դու մեծ էիր հոգով, մտքով, ինչպես մեծ էր անմահ Լենինն,
Մեր ուղեցույց անշե՛ջ փարոս, անմե՛ռ հերոս, Հա՛յր ՍՏԱԼԻՆ:

Դու փրկեցիր կեղեքումից բանվորներին տկար, աղքատ,
Ազատություն պարգևեցիր մարդկանց ստրուկ և անազատ,
Պատվար եղար արդարության, պաշտպան եղար փոքր ազգերին,
Մե՛ծ զորավար անմահանուն և իմաստուն, Հա՛յր ՍՏԱԼԻՆ:

Աշխարհավեր պատերազմի հրձիգներին դրամապաշտ՝
Դո՛ւ սանձեցիր ձեռքովդ ամուր և մղեցիր պայքար անհաշտ՝
Որ աշխարհում ամենուրեք, թեկուզ մի մայր, չողբա որդին...
Խաղաղության անհա՛ղթ վահան, հզո՛ր պաշտպան, Հա՛յր ՍՏԱԼԻՆ:

Հայ արևն էլ ընդմիշտ խավար, հայ երկիրն էլ ընդմիշտ ավեր՝
Կանգնել էին անդունդի մոտ: Դու ասացիր. «Պե՛տք է փրկե՜լ...»
Ու փրկեցիր և Հայրենիք պարգևեցիր հայոց ազգին,
Հավերժորեն մեր սիրելի, մեր պաշտելի, Հա՛յր ՍՏԱԼԻՆ:

Ճաճանչարձակ քո մեծ փառքի առջև դարեր պիտ խոնարհվեն,
Համբուրելի հիշատակդ՝ ժողովուրդներ պիտի հարգեն
Ու բարձրացնեն քո փառապանծ դրոշակը արփիածին,
Խաղաղարար, ազատարար, հրամանատար, Հա՛յր ՍՏԱԼԻՆ:

Քնի՜ր հանգիստ, հարազա՛տ Հայր, հավետ մե՛րն է լույս ապագան,
Դու գծել ես ու մեզ տվել միասնության ուղիղ ճամբան.
Այդ ճամբի մեջ եղար մեզ հետ, պիտի լինենք միշտ միասին,
Սպարապետ հոգով արի, սրտով բարի, Հա՛յր ՍՏԱԼԻՆ: